



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ՊԵՏԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 7(22), 30 սեպտեմբերի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՈՒՂԵՐՁ՝ ԱՊԱԳԱ ՕՐԻՆԱՊԱՅՆԵՐԻՆ

Դուք մարդիկ եք, ապրում եք մարդկանց միջավայրում, և ձեր յուրաքանչյուր ցանկությունն անդրադառնում է մարդկանց վրա, հասարակական կյանքի զարգացման վրա:

Հիշե՛ք, որ գոյություն ունի սահման ցանկալի, կարելիի և անհրաժեշտության միջև: Ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում ձեր արարքներն ստուգե՛ք գիտակցությամբ՝ անհարմարություն, տհաճություն և չարություն չպատճառելով մարդկանց:

Պետք է ապրել՝ նայելով միշտ առաջ, շարժվելով միշտ առաջ, ավելի ապահով, հետաքրքիր և զեղեցիկ դարձնելով կյանքը:

Դասախոսը ձեր խորհրդատուն է և օգնակա-

նը: Համարձակ հարցե՛ր հղեք նրանց, գնացե՛ք նրանց մոտ օգնության: Թող ակտիվ համագործակցություն լինի սովորողի և դասախոսի միջև: Սովորե՛ք համարձակ ասել ճշմարտությունը: Արհամարհե՛ք սուղը և կեղծիքը: Պահանջելով ուրիշներից՝ պահանջե՛ք նաև ձեզնից: Կարողացե՛ք հանձն առնել ձեր իսկ թերությունները:

Թող բարգավաճեն փոխադարձ հարգանքը, բարությունը, ազնվությունը: Միշտ եղե՛ք արդարության ջատագովը, քանզի դուք արդարության դեսպաններ եք: Սովորե՛ք այնպես, որ վաղը, դառնալով գրագետ, հուսալի և վստահելի օրինակահ, հավատ ներշնչեք հասարակությանը:

Մենք հավատում ենք ձեզ:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՈՒՄ

Եռագույն դրոշով զարդարված բեմահարթակ, հայրենասիրական երգերի ու պարերի ներքո ուղեկցվող տրամադրություն: ՀՀ անկախության 28-րդ ամյակի նախօրեին՝ սեպտեմբերի 20-ին, ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ տոնական միջոցառում:

Միջոցառմանը ներկա էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմը՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ:

Տոնակատարության սկզբում ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և պատասխանատվությամբ կատարելու, ինչպես նաև երկարամյա ծառայության համար ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով խրախուսվեցին մի շարք ծառայողներ:

Միջոցառումն ուղեկցվեց տոնական համերգով: Կրթահամալիրի աշխատակիցներին շնորհավորելու էին եկել «Սասուն» ազգագրական երգի-պարի, «Կարոտի կանչ» համույթները, ՀՀ վաստակավոր արտիստներ Մկրտիչ Մկրտչյանն ու Արուս Գուլանյանը: Տոնական համերգին մասնակցեցին նաև կրթահամալիրի ծառայողները (բոլեջի սովորողներ Անի Միդեյան, Հովիկ Հակոբյան, ԱՅՄ բաժնի ակումբի կրտսեր տեսուչ, ոստիկանության սերժանտ Ասատուր Ասլանյան):

Տոնական միջոցառման ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը սովորողներին ու ծառայողներին շնորհավորեց անկախության տոնի առթիվ մարտելով եռանդ ու նվիրված ծառայություն անկախ Հայաստանին:

ԱՆԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԶԱՅԼԻՐ ԱՆՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՐՅՈՎ, ԴՈՒ ԱՐԺԱՆԻ ԵՄ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ

Ինչ լեզվով էլ որ խոսենք, մեր առաջին բառը «Մայր» է լինելու, վերջինը՝ «Հայրենիք»

Մ.Բաբայան «Հորիզոնին չհասած»

Պատմության էջերը թերթելիս հազվադեպ կարելի է հանդիպել այնպիսի ժողովուրդների, որոնք դիմակայել են ժամանակի հարվածներին և չեն փոշիացել դարերի ընթացքում, կարողացել են համարձակ նայել մահվանն ու արհամարհել այն, ավելին՝ կարողացել են սարսափ ներշնչել ոսոխին ոչ միայն բազկի ուժով, այլև ոգու խիզախությամբ: Հայ ժողովուրդը, դիմակայելով դարերի դաժան փորձություններին, մշտապես հերոսացել է պատմության քառուղիներում և որդան կարմիրով իր անունը գրել դարերի հիշողության մեջ: Հայը երկարատև մաքառումների շնորհիվ ձեռք բերած մի բուռ հողով ու իր նվիրյալներով պատմություն է կերտել, ծնկի բերել թշնամուն, ընկճել ոչ միայն նրա ուժը, այլ նաև նրա գոռոզ հոգին ու բռնակալ էությունը: Հայն աշխարհին ապացուցել է, որ գոյության կռվում հաղթում է նա, ով սպանում է իր մեջ ծվարած ստրուկին, և որպես հավերժի ճամփորդ՝ ի լուր ամենքին հայտնեց, որ ով չի ուզում մեռնել, հնարավոր չէ սպանել նրան, քանզի արժանի է հավերժության... Այս ամենի շնորհիվ է, որ մենք այսօր ունենք անկախություն:

Պատմության էջերը թերթելիս հազվադեպ կարելի է հանդիպել այնպիսի ժողովուրդների, որոնք դիմակայել են ժամանակի հարվածներին և չեն փոշիացել դարերի ընթացքում, կարողացել են համարձակ նայել մահվանն ու արհամարհել այն, ավելին՝ կարողացել են սարսափ ներշնչել ոսոխին ոչ միայն բազկի ուժով, այլև ոգու խիզախությամբ: Հայ ժողովուրդը, դիմակայելով դարերի դաժան փորձություններին, մշտապես հերոսացել է պատմության քառուղիներում և որդան կարմիրով իր անունը գրել դարերի հիշողության մեջ: Հայը երկարատև մաքառումների շնորհիվ ձեռք բերած մի բուռ հողով ու իր նվիրյալներով պատմություն է կերտել, ծնկի բերել թշնամուն, ընկճել ոչ միայն նրա ուժը, այլ նաև նրա գոռոզ հոգին ու բռնակալ էությունը: Հայն աշխարհին ապացուցել է, որ գոյության կռվում հաղթում է նա, ով սպանում է իր մեջ ծվարած ստրուկին, և որպես հավերժի ճամփորդ՝ ի լուր ամենքին հայտնեց, որ ով չի ուզում մեռնել, հնարավոր չէ սպանել նրան, քանզի արժանի է հավերժության... Այս ամենի շնորհիվ է, որ մենք այսօր ունենք անկախություն:

Հռչակագրում հատուկ կետ ներառվեց հայոց ցեղասպանության մասին: Հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մաս ճանաչելու վերաբերյալ:

Հռչակագրի պատմական նշանակությունն այն էր, որ հիմք հանդիսացավ ազգային օրենսդրության և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համար: Հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը՝ ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Այսօրվա մեր անկախությունը՝ որպես բարձրագույն արժեք, պետք է պահենք սրբությամբ: Հայաստանը մեր տունն է, հայրենի բնօրրանը, որտեղ անկախությունն ունի բովանդակություն և դարձել է յուրաքանչյուր քաղաքացու ինքնության գերագույն արժեքը: Անկախությունը ոչ միայն պետության կարգավիճակ է, միջազգային կառույցներում ներկայացված լինելու իրավունք, այլ նաև, առաջին հերթին, քաղաքացու ազատություն, կյանքի որոշակի որակ, անվտանգություն:

Բազում դժվարությունների արդյունքում ձեռք բերված անկախությունն այսօր թանկ է յուրաքանչյուրիս համար, իսկ սեպտեմբերի 21-ը՝ իրական տոն, որը համայն հայությունը նշվում է մեծ շուքով:

1990 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ գերագույն խորհուրդն ընդունեց 12 կետից բաղկացած Հայաստանի անկախության հռչակագիրը, որտեղ նշված էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում, և ձևավորվում է նոր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին՝ անկախու-

ՈԱԿ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐ



ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մեկնարկեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը: Պետական հավատարմագրման գործընթացն սկսվել է դեռևս 2018թ. սեպտեմբերի 21-ից, երբ Կրթահամալիրը պաշտոնապես դիմեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին ինստիտուցիոնալ (կառուցվածքային) հավատարմագրման գործընթացն սկսելու համար: Գործընթացը բաղկացած է երեք փուլից՝ նախնական գնահատման փուլ, փորձագիտական այցի փուլ, որոշման կայացման փուլ:

Նախնական գնահատման փուլը Կրթահամալիրի համար ակտիվ գործողությունների փուլ էր, երբ ինքնավերլուծություն իրականացվեց և ներկայացվեց ՈԱԿ փորձագիտական գնահատման համար:

Երկրորդ փուլը փորձագիտական այցն էր Կրթահամալիր, որը տեղի ունեցավ 2019թ. սեպտեմբերի 16-ից 20-ը ներառյալ. փորձագիտական խումբը (տեղական և միջազգային անկախ փորձագետների կազմով) 10 չափանիշներով գնահատում իրականացրեց:

Այցի շրջանակներում փորձագետները հանդիպումներ ունեցան Կրթահամալիրի պետի, պետի տեղակալների, խորհրդի ներկայացուցիչների, ֆակուլտետների պետերի, ինքնավերլուծություն իրականացրած խմբի, վարչությունների և բաժնիների պետերի, քուլեջի ղեկավարության, որակի ապահովման

բաժանմունքի մասնագետների, ամբիոնների պետերի, պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, շրջանավարտների և գործատուների ներկայացուցիչների հետ: Արդյունքում հավաստիացան ինքնավերլուծությանը ներկայացված տեղեկատվության իսկության և Կրթահամալիրի առավելությունների մասին: Փորձագիտական խումբն ուսումնասիրեց նաև Կրթահամալիրի թույլ կողմերը, որի հիման վրա կտրամադրվի խորհրդատվություն և կկազմվի բարելավման պլան:

Երրորդ փուլը որոշման կայացման փուլն է, երբ փորձագիտական խումբը կկազմի համապատասխան զեկույց, որի հիման վրա հավատարմագրման հանձնաժողովը կորոշի Կրթահամալիրին տրամադրվող հավատարմագրման ժամկետը:

Հավատարմագրման հիմնական նպատակն է ուսումնական հաստատություններին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը հավաստել, որ մասնագիտական կրթության որակը ծանաչելի է պետության կողմից: Հավատարմագրումը մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի կատարողականի և որակի ճանաչումն է, որը հանգեցնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանն ու հասարակության վստահության ձևավորմանը:

ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԶԱՅԼԻՐ ԱՆՍԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՐՅՈՒԹՅՈՒՆԸ...

1 Մանուկ ու ծեր, անկախ տարիքից ու կարգավիճակից, մասնակցում են տոնակատարությանը՝ ևս մեկ անգամ ապացուցելով իրենց սերն ու նվիրումը Հայաստանի Հանրապետությանը: Անկախությունը մեզ տվել է ազգային գիտակցություն, ավելի ճիշտ մեր սերունդը վերագտել է այդ կրոնսյալ գիտակցությունը, հայոց լեզվի, հայկական մշակույթի, հայ էության և տեսակի ընկալումը:

Անկախության սերնդի աչքերը լի են հավատով, խանդավառությամբ, նրա հոգին ավելի անկտրում է, պայքարը ավելի ուժգին, որի փայլուն վկայությունը եղավ ապրիլյան քառօրյա պատերազմը, երբ աշխարհի բոլոր ծագերից հայությունը համախմբվեց՝ հաստատելու իր հպարտ ինքնությունը: Մեզ համար անկախությունն այլևս պետք է վկայի որպես մշտական և հավերժական ճանապարհ:

Անկախ Հայաստանում ապրելը պատիվ է յուրաքանչյուրիս համար:

Լիանա Խրշոյան
Ոստիկանության լեյտենանտ



րատև անկախությունը պահպանելու: Անկախությունը ես եմ, դու ես և Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր քաղաքացիները: Իսկ այն պահպանելու առաքելությունը բոլորիս սրբազան պարտքն է: Շնորհավոր տոնդ, 28-ամյա ազատ ու անկախ Հայաստան:

ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՍ ԵՄ, ԴՈՒ ԵՍ...

28 տարի առաջ՝ սեպտեմբերի 21-ին, Խորհրդային Հայաստանի քաղաքացիների 94,99 տոկոսը վճռական «այո» ասաց Անկախությանը և կայացրեց պատմական որոշում՝ ընտրելով անկախ պետականության կերտման ուղին:

Անկախությունն արժեք է, գիտակցություն, որը պետք է ունենա ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի: Անկախությունը սոսկ բառ չէ, այն բարձրագույն արժեք է: Պատահական չէ, որ անկախություն ձեռք բերելու, թշնամու ոտնձգություններին դիմակայելու և սեփական երկիրը պաշտպանելու համար բազում հայորդիներ են մահատակվել: Ապրիլյան քառօրյա պատերազմը հերթական անգամ ապացուցեց, որ անկախությունը սկուտեղի վրա մատուցված պարզ չէ, և այն պատվով պահպանել է պետք: Անկախությունն իմ, քեզ, բոլորիս համար պահպանել են կապիտան Արմենակ Ուրֆանյանը, Քյարամ Սլոյանը, Ադամ Սահակյանը, Տիգրան Պողոսյանը, փոխգնդապետ Ալեքսան Առաքելյանը, Ռոբերտ Աբաջյանը և մյուս բոլոր քաղաքացիները: Նրանք զոհվեցին՝ հանուն հայկական երկու պետությունների հատուկ անկախությանը:

Հակոբ Քոչարյան
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի սովորող, ոստ. սերժանտ

Միջազգային այցեր, փոխանակման ծրագրեր, մի շարք նախագծերի առաջարկներ, ահա այսպիսի հետաքրքիր միջոցառումներով էր հագեցած ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սեպտեմբերը:

Սեպտեմբերի 9-ից 13-ը ԵՄ իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) փոխանակման ծրագրով Չեխիայի ոստիկանության ուսումնական ղեկավարամետի սպա, ոստիկանության փոխգնդապետ Միրոսլավ Կորտանն այցելել էր Հայաստան: Միջոցառման շրջանակներում նա ճանաչողական այց կատարեց նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիր, որտեղ նրան ընդունեց կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը:

Կրթահամալիրի կառուցվածքին, ուսումնական ծրագրերին և հեռանկարային նախագծերին ծանոթանալուց, կրթահամալիրի տարածքով շրջայց կատարելուց հետո ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանի ուղեկցությամբ Չեխիայի ոստիկանության ուսումնական ղեկավարամետի սպան ճանաչողական այց կատարեց նաև ՀՀ ոստիկանության շտաբի միջազգային համագործակցության վարչություն, Ինֆորմացիոն կենտրոն, ինչպես նաև ոստիկանության տարածքային բաժին և, ծանոթացավ ՀՀ ոստիկանության առօրյա աշխատանքին, ուսումնասիրեց լիազորությունների շրջանակն ու գործառնությունները:

Կրթահամալիրի ուսումնական ծրագրերով հետաքրքրված է նաև Եվրոպայի խորհրդի գրասենյակը: Սեպտեմբերի 9-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին ժամանել Եվրոպայի խորհրդի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչները, որոնք զբաղվում են կիրառական գիտությունների ոլորտում:



edupolice.am

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



edupolice.am

հանցագործության դեմ պայքարի ծրագրերով: Նրանց նպատակն էր կրթահամալիրում կիրառական գիտությունների ոլորտի հատուկ մասնագետներ պատրաստելու ուղղված առաջարկներ անելն ու դասավանդվող համապատասխան առարկաների ներմուծման հնարավոր տարբերակների շուրջ զրուցելը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գագիկ Գևորգյանը, շնորհակալություն հայտնելով հյուրերին առաջարկների համար, ներկայացրեց հատուկ մասնագետների համար նախատեսված թեմատիկ ծրագրերն ու դասընթացները, որոնք միջազգային փորձագետների նախաձեռնությամբ իրականացվում են կրթահամալիրի դասախոսների, ոլորտի պրակտիկ մասնագետների համար:

Հարկ է ընդգծել, որ կիրառական գիտությունների ոլորտում պայքարն ամբողջովին

թացան կառուցվածքային առանձնահատկություններին, մյուսապես իրական բազային, եղան սիմուլյացիոն և հատուկ մշակույթի լսարաններում, ինչպես նաև այցելեցին ոստիկանության պատմության թանգարան:

ԵԱՀԿ անդրազգային սպառնալիքների ստորաբաժանման ոստիկանության ռազմավարական հարցերի բաժնի համայնքային ոստիկանության գծով խորհրդական Մոնա Նորդբերգը 2019թ. սեպտեմբերի 12-ին այցելել էր կրթահամալիր՝ քննարկելու «ՀՀ ոստիկանության և հասարակության գործընկերության ամրապնդում» հաստատված ծրագիրը, որի նախագծի մասին փորձագետն առաջարկություններով էր հանդես եկել դեռևս անցած տարի:



edupolice.am

ընդգրկում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Այսպես՝ Եվրոպական միության տեխնիկական օժանդակման և տեղեկատվական փոխանակման (TAIEX) ծրագրի ներկայացուցիչներին ևս հետաքրքրում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրը: 2019թ. սեպտեմբերի 10-ին ծրագրի ներկայացուցիչները հանդիպեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավար կազմի հետ՝ ի դեմս կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի: Նրանք ծանոթացան կրթահամալիրում տեղի ունեցող գործընթացներին, ուսումնական ծրագրերին ու հաստատության կառուցվածքին՝ ծանոթանալով նաև ոստիկանությունում և կրթահամալիրում իրականացվող բարեփոխումներին:

Քննարկումից հետո հյուրերը կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանի ուղեկցությամբ շրջայց կատարեցին կրթահամալիրի տարածքով, ծանո-

թանդիպման սկզբում կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը, ողջունելով հյուրին, ներկայացրեց կրթահամալիրի առանձնահատկությունները, ուսումնական գործընթացներն ու կառուցվածքը:

Այնուհետև ԵԱՀԿ համայնքային ոստիկանության գծով խորհրդական Մոնա Նորդբերգը ներկայացրեց ծրագրով նախատեսված համայնքային ոստիկանության ու հասարակության գործընկերությանն առնչվող միջոցառումների բովանդակությունն ու իրականացնելու հնարավոր տարբերակները:

Ամփոփելով քննարկումը՝ կրթահամալիրի պետը թվարկված նախաձեռնություններից ընդգծեց այն միջոցառումները, որոնք ուղղակիորեն կապ ունեն կրթահամալիրի գործունեության հետ, և օժանդակելու, իրագործելու իր պատասխանատվությունը հայտնեց:

Աճի Դուկայան
Ոստիկանության ավագ լեյտենանտ

ԱՍՓՈՓՎԵՑԻՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ

Սույն թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2019 թվականի 9-րդ նիստը:

Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց հավանություն տալ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի

նախկին երեք սովորողների ուսանողական իրավունքների վերականգնման միջնորդությանը դիմել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին:

Գիտական խորհրդի նիստում ամփոփվեցին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբիոններին կից գիտական խմբակների 2018-2019 ուստարվա գործունեության և



ակադեմիայի ուսումնական պլաններին, հաստատել ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի հավակնորդների թեկնածությունները, հաստատել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման կուրսերում 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում նախատեսված ընթացիկ ստուգման ձևերը, մեկնագամյա հավելավճար տրամադրել 2018-2019 ուստարվա ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմի այն ներկայացուցիչներին, որոնց ուսումնական ծանրաբեռնվածության սահմանված ծավալը գերազանցվել է, փոփոխություն կատարել ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի գործունեության կարգում, կրթահամալիրի

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբիոնների 2018-2019 ուստարվա գիտական գործունեության արդյունքները: Հատկանշական է, որ դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա համեմատությամբ գիտական հրապարակումների քանակը գրեթե կրկնապատկվել է, մասնավորապես՝ գիտական հոդված՝ 48 (նախորդ ուստարվա 25-ի դիմաց), ուսումնական ձեռնարկ՝ 5 (3-ի դիմաց), մեկնագրություն՝ 2 (1-ի դիմաց): Այսպիսով, ընդհանուր առմամբ՝ գիտական հրապարակումները նախորդ ուստարվա համեմատ ավելացել են 23-ով կամ 74%-ով:

Ամբիոնների գիտական գործունեության արդյունքներն արտացոլող վարկանիշային աղյուսակի համաձայն՝ լավագույն ամբիոն ճանաչվեց քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը:

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԵՐԵՔ ՍԵՐՈՒՆԴ



Չախից առաջինը՝ տասնիկը՝ Սեդա Ծատուրյան, երկրորդը՝ հայրը՝ Յուրի Մխիթարյան, երրորդը՝ որդին՝ Աշոտ Մխիթարյան, չորրորդը՝ դուստրը՝ Նունե Մխիթարյան

Տասը՝ Սեդա Ծատուրյան

Իր ծնունդից սկսած՝ միլիցիան, ապա՝ ոստիկանությունը բոլոր ժամանակներում նվիրյալների պակաս երբեք չի զգացել: Անընդհատ նրա շարքերը համալրվել են ազգի լավագույն քաջորդիներով, սակայն որ գեղեցիկ սեռի ներկայացուցիչը զինվորագրվի, երկար ու ձիգ տարիներ ծառայի և ոստիկանության սամոդակով վեր բարձրանա՝ զբաղեցնելով լուրջ ու պատասխանատու պաշտոններ, հաճախ չի հանդիպում: Պատասխանատվության գերբարձր զգացում, պրոֆեսիոնալ նվիրվածություն, կարգապահություն, անկոտրուց կամք, սրտացավություն գործընկերների նկատմամբ, պաշտամունքի հասնող հայրենասիրություն, անսահման բարություն. ահա այն որակները, որոնք պատկանում են Սեդա Ծատուրյան ֆեմինին: Նրա բարությունն ընդգծելու համար ցանկանում են ներկայացնել մի փոքրիկ դրվագ:

Կանանց գաղութի պետն էր: Ահագնագեցին, որ դատապարտյալներից մեկը դիմել է փախուստի: Սեդա Ծատուրյանը հրամայեց գաղտնի պահել միջադեպը, իսկ ինքը, առաջնորդվելով կանացի իր նուրբ բնազդով, հանձն առավ դատապարտյալին անհապաղ գտնելու և գաղութ վերադարձնելու պատասխանատու և վտանգավոր գործը: Քիչ էր մնացել պատիժը կրելուն, իսկ դատապարտյալը տարիների ընթացքում ոչ մի խախտում թույլ չէր տվել: Անհապաղ պետք էր փրկել ևս մի կործանվող ճակատագիր: Որոնողական աշխատանքները տվեցին սպասված արդյունքը. հեռավոր բարեկամներից մեկի տնից գտավ փախուստի դիմած կնոջը և վերադարձրեց գաղութ: Սեդա Ծատուրյանը գիտակցում էր իր քայլի վտանգավորությունը, սակայն ճակատագրեր խեղդել հայուհուն վայել չէր, թեկուզ ուսադիրները պարտադրում էին:

Սեդա Ծատուրյանը ծնվել է 1918թ. դիկտանում: Իր աշխատանքային մկրտությունն սկսել է հենց դիկտանի միլիցիայի բաժնից: Չուզահեռաբար ստանալով բարձրագույն կրթություն՝ Ս. Ծատուրյանը նշանակվում է կանանց գաղութի պետի պաշտոնին, ապա՝ ՆԳՆ քարտուղարության պետ, այնուհետև՝ ՕԿԻՐ-ի պետ: Իր դժվար ու պատասխանատու ծառայությանը զուգահեռ՝ Սեդա Ծատուրյանը նաև ստեղծագործել է: Նրա պատմվածքները լույս են տեսել ժամանակի հեղինակավոր ամսագրերում, որոնք ընթերցողին գերել են իրենց անկեղծությամբ, պարզությամբ ու լեզվական պատկերավորությամբ:

1973թ. միլիցիայի մայրը Սեդա Ծատուրյանն անցել է վաստակած համազստի, իսկ 1993թ. կնքել է իր մահկանացուն:

Ցավոք, նա այժմ չկա, սակայն ցայսօր հայրենասիրության, մարդասիրության ու նվիրումի դասեր է տալիս ոչ միայն իր թոռներին ու ծոռներին, այլև այսօրվա ոստիկանության մոր սերնդին:

Հայրը՝ Յուրի Մխիթարյան

Երազանքի ճանապարհը մի օր Յուրի անունով երիտասարդին տարավ միլիցիա: Դա 1960 թվականն էր: Դեղեկտիվ գրականություն սիրող պատանու երազանքը քրեական հետախույզ դառնալն էր: Մեկ տարի հետո Յուրին դարձավ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող: Նա իր քաջագուն ծնողների իսկական զավակն էր, ում երակներով հոսում էր գնդապետ, շքանշանների ու մեդալների ասպետ զինվորական հոր և բիթխցի մոր արյունը:

Յուրի Մխիթարյանի տարերքն օպերատիվ գործն էր, քրեական հետախույզի բազմաթվանդակ աշխատանքը, սակայն համալսարանն ավարտելուց հետո նրան տեղափոխեցին քննչական վարչություն: 1970թ. նշանակվեց Կալինինյանի(Տաշիր) ՆԳ բաժնի պետ, իսկ 1973-ին կրկին ՆԳՆ քննչական վարչություն: Յուրի Մխիթարյանն ամենուր աշխատել է պատասխանատվության բարձր զգացումով և երբեք չի չարաշահել պաշտոնական դիրքը: 1979-1989թթ. Յուրին աշխատել է ՆԳՆ քրեական հետախույզության վարչությունում, իսկ 1989-1991թթ. եղել է ՆԳՆ տրանսպորտային վարչության քրեական հետախույզության բաժնի պետ:

Դուստրը՝ Նունե Մխիթարյան

Համակարգի և սպայական համագեցուտի հանդեպ հորից ժառանգած ակնածանքով ընտանեկան ավանդույթները շարունակում են Յուրի Մխիթարյանի որդին՝ ոստիկանության փոխգնդապետ Աշոտ Մխիթարյանը, և դուստրը՝ ոստիկանության մայրը՝ Նունե Մխիթարյանը:

Նունեն ոստիկանությունում իր կենսագրությունը գրում է 1994-ից: Սկզբում ծառայության է անցել ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության բանկային համակարգի պահպանության գնդում որպես դասակի հրամանատար, հետո՝ որպես շտաբի ավագ տեսուչ: 2013թ. Նունեն իր ծառայությունը շարունակում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես տեխնիկական ամբիոնի կարիերայի պետ:

Վերջերս լրացավ սիրված գործընկեր, կարգապահ ոստիկան և պարզապես լավ քաղաքացի ու հրաշալի հայուհի Նունե Մխիթարյանի՝ ոստիկանության համակարգում ծառայության 25 տարին: Այդ հրեքյանական տարեդարձի կապակցությամբ նրան ցանկանաք առողջություն, նորամուտ հաջողություններ ու ձեռքբերումներ և հուսանք, որ դեռ այս գեղեցիկ պատմությունը տարիներ հետո կունենա հրաշալի շարունակություն:

Ռոզա Մուսաբեյան
ոստիկանության գնդապետ

Թեյի սեղանի շուրջ նստած՝ հիշում ենք անցած լավ ու վատ օրերը, քննարկում եղածն ու լսում մեծ հայրենասերի հուշերը: Մենք հյուրընկալվել ենք ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Գեորգի Գրիգորյանին: Տարիներն անցել են, հրամանատարի մեջ ոչինչ չի փոխվել. նույն անսահման հայրենասեր, վճռական ու բարի մարդն է: Ոչինչ չի փոխվել, բացի այքերից, որտեղ ծով համբերություն և տարիների մեծ ցավն ու դժվարությունն են դրոշմված:

Տաք թեյը մի փոքր փորձելուց հետո մտքերով տեղափոխվեցինք հրամանատարի հուշերն ու Արցախյան հերոսամարտի տարիները:

Գեորգի Գրիգորյանը միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի հրամանատարն էր: Իր հետ ծառայած տղաները պատմում են հրամանատարի մասին՝ ինչպես մի կենդանի լեգենդի, ում սխրագործություններն Արցախում ուղղակի աննկարագրելի էին:

Ուշագրավ մի պատմություն, որը լսելիս

ՄԻ ԲԱԺԱԿ ԹԵՅ՝ ՀԱՄԵՍԿԱԾ ՀՈՒՇԵՐՈՎ

ուղղակի սարսռում և միաժամանակ հպարտություն են ապրում, - ասում են տղաներն ու շարունակում պատմությունը.

Հետախույզության գնացած խումբը, մթության մեջ կորցնելով ճանապարհը, հայտնվել էր թշնամու տարածքում:

Հրամանատարը ծանր ապրումների մեջ էր: Իսկ երբ տղաները հաջողությամբ ձեռքբեցին շրջափակումը, նա հուզմունքից մեկ մեկին էր գրկում, մեկ՝ մյուսին... Նրան այդպես հուզված չէինք տեսել...»:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը սահմանամերձ շրջանների պաշտպանությանը մասնակցեց ամենաթեժ, ամենավտանգավոր հատվածներում: Ջոկատին անդամագրված այս մարդիկ առաջնորդվում էին «Մեր հայրենիքը մե՞ք ենք պաշտպանելու» գաղափարով: Ու պաշտպանեցին՝ փառավոր էջեր գրելով հայկական միլիցիայի

պատմության մեջ:

«Հրամանատարը միշտ մեզ հետ էր, մեր կողքին՝ առաջին գծում», - հիշում են նրանք:

Ոստիկանության պաշտոնաթող մայրը Կիմ Անտոնյանը հատուկ նշանակության ջոկատի առաջին անդամներից էր: «Մեր հրամանատարն իր մարտիկների համար կյանքը կտար: Բոլորի համար դողում էր, դիրքեր բարձրանալիս անպայման ինքը պետք է առաջինը բարձրանար», - ասում է Անտոնյանը և ընկնում հիշողությունների գիրկը:

Եղուարդ Կայսանը, որ այն ժամանակ ծառայում էր կադրերի բաժնում և ջոկատի առաջին անդամներից էր, հիշում է. «Գեորգի Գրիգորյանը լցված էր զինվորական ռոմանտիզմով: Խիզախ, համարձակ, հաղթելու վճռականությամբ ու վստահությամբ, մարտավարական հմտություններով օժտված. այսպիսին էր նա: Սիրում էր կրկնել՝ մենք

եկել ենք ոչ թե զոհվելու, այլ հաղթելու»:

Ծառայակից տղաները հիշում են ջոկատի առաջին գոհին՝ Գարեգին Բաղդասարյանին: Վարդենիսի ուղղությամբ էին կռվում. Գեորգի Գրիգորյանը երդման պես ասում էր՝ Գարիկի փոխարեն թշնամին տարը զոհ է տալու... Պատմում է ոստիկանության պաշտոնաթող մայրը Ժորա Սմբաթյանը.

«Գարիկի զոհվելուց հետո, այսպես ասած, տաք գլխով ուզում էինք ինչ-որ գործողություններ անել: Նստել էինք վիլիսները, ուզում էինք գնալ դեպի թշնամին: Ինչ խոսք, եթե այդպես վարվեինք, երևի ավելի շատ զոհեր կունենայինք: Բայց հրամանատարը եկավ, բարկացավ մեզ վրա, հետ դարձրեց: Գործողություններ էլի արվեցին, բայց արդեն Գրիգորյանի ղեկավարությամբ»:

Իսկ հետո արդեն ծառայություն ոստիկանության գործերում, ոստիկանության

ԿՐԿԻՆ ՀԱՂԹԵՑԻՆԸ



Համաձայն ՀՀ ոստիկանության միջոցառումների անցկացման 2019թ. օրացուցային պլանի սեպտեմբերի 18-ից 20-ը երևանում ոստիկանության հրաձգարանում, անցկացվեց ծառայողական եռամարտի առաջնությունը: Մասնակցում էր ՀՀ ոստիկանության տասնութ ստորաբաժանում: Կրթահամալիրի թիմը մրցումներին ներկայացավ հետևյալ կազմով՝ ակադեմիայի մագիստրատուրայի 1-ին կուրսի սովորող, ոստիկանության լեյտենանտ Արմեն Խալաթյան, ակադեմիայի 4-րդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Յուլիան Դավթյան, ակադեմիայի առաջին կուրսի սովորող, ոստիկանության լեյտենանտ Ջիվան Հարությունյան և քոլեջի 2-րդ կուրսի սովորող Գուրգեն Գրիգորյան: Թիմի

մարզիչն էր քոլեջի մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Էդգար Պողոսյանը: Ծառայողական եռամարտը ներառում է հրաձգություն «Մակարով» ատրճանակից, վազք՝ 100 մետր, և նռնակի նետում: Անգիջում պայքարում Կրթահամալիրի հավաքական թիմը գրավեց առաջին հորիզոնականը: Առանձնակի հաջողությամբ հանդես եկավ Յուլիան Դավթյանը, ով անհատական պայքարում 72 մասնակիցներից երեք սպորտաձևերում նույնպես գրավեց առաջին հորիզոնականը: Թիմային պայքարում երկրորդ տեղում էր ոստիկանության գործերի ստորաբաժանումը, երրորդում՝ ՊՊԾ գունդը:

ՄԻ ԲԱԺԱՎ ԹԵՅ՝ ՀԱՍԵՄՎԱԾ ՀՈՒՇԵՐՈՎ

3 թյան Լոռու մարզային վարչությունում, ոստիկանության շտաբում, կրթահամալիրում... «Ոստիկանության կրթահամալիրում Գրիգորյանի հետ ենք աշխատել: Հիանալի ղեկավար, լավ մարդ, լավ գործընկեր: Հիշում եմ դասաժամերը հետքերի կազմակերպելու համար իր տան մեծ հեռուստացույցը բերեց, որ սովորողներն ավելի հաճույքով այցելեն դասերի: Աշխատանքի վայրում սիրում էր, որ ամենը տեղը տեղին լիներ, նույնը էլ ընտանիքում՝ մկրված ու լավ հայր է: Մինչ օրս, որ այցելում ենք իրեն, նույն Գրիգորյանն է, միայն մի բան է փոխվել՝ ուղղակի լսում է, չի կարողանում խոսել, իսկ ասելիքը հասկանում ենք աչքերից»,- հիշում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տեխնիկական առարկաների ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Գ. Կառլյանը: Պատմում է ոստիկանության գնդապետ, «Ղեկտա» ջոկատի հրամանատար Արմեն Պապյանը. «Հիշում եմ պետք է մեկնեիք Շահումյան: Վիճակն այնտեղ շատ ծանր էր: Արդեն ուղղաթիռ էինք նստում, երբ Վազգեն Սպարապետը, որ այն ժամանակ պաշտպանության կոմիտեի նախագահն էր, մեզ տեսավ, հարցրեց՝ ովքեր են: Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատն է՝ պատասխանեցին: Այսպիսի բանակ պետք է ունենանք՝ ասաց: Երբ կազմավորվում էր միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը, Գեորգի Գրիգորյանը մեզ չէր ճանաչում, մենք էլ իրեն չէինք ճանաչում, բայց շնորհիվ նրա կազմակերպչական ունակությունների՝ կարճ ժամանակում դարձանք մի բռունցք կամոնավոր, պատրաստված... Շատ մարտական գործողությունների ենք մասնակցել, բայց շատ քիչ զոհ ենք տվել, և դա խոսում է Գեորգի Գրիգորյանի կազմակերպչական ունակությունների, մարտավարական հմտությունների մասին»: Այս հուշերից հետո թեյի սեղանի շուրջ քար լռություն է տիրում, լսվում է ժամացույցի սլաքների ծայրը, ու իսկական հերոսի ժպիտով ավարտվում է սկսած փոքր զրույցը, որն իրականում մեծ պատմության մասին էր... Մարիետա Խերանյան ոստիկանության ավագ լեյտենանտ

Հետաքրքիր փաստեր

* «Ոստիկանություն» բառը հին հունական «պոլիտիկա» պետություն, քաղաք բառերից է: Հին հռոմեացիների մոտ այդ բառը նշանակել է հասարակական կարգ: «Ոստիկանություն» բառը «հասարակական կարգ» իմաստով առաջին անգամ հանդիպում է սաքսոնացի իրավաբան Մելխիոր ֆոն Օսսեյի աշխատություններում: * Ոստիկանության համակարգը Անգլիայում հայտնվել է 1826 թ., երբ Ռոբերտ Պիլը ստեղծեց հատուկ օրինապահ օրգան՝ Լոնդոնի մայրաքաղաքային ոստիկանություն: Ի դեպ, Պիլի անվան փառաբանական տարբերակը «բորբին», Անգլիայում օգտագործվում է որպես ոստիկանների մականուն:

* Հանցագործ աշխարհի դեմ պայքարի ամենադժգոյ մեթոդը կիրառում են Անգլիայի ոստիկանները: * Բրիտանացի ոստիկանների հատկանշական կանգուն օձիքները մնացել են ոստիկանների հին հանդերձաններից. այն ժամանակ օրենքի պահապաններին տրվել է կաշվե վզնոց, որը պաշտպանում էր շնչահեղձությունից: Բարձր օձիքը նախատեսված էր կաշվե վզնոց կրելը դարձավ ոչ պարտադիր, բայց պիրկ ձգված օձիքը մնաց և դարձավ բրիտանացի ոստիկանների հագուստի հատկանշական մասը:

Հետաքրքիր է Մի մարդ ապրում է 17-րդ հարկում: Իր հարկ նա վերելակով կարողանում է բարձրանալ միայն անձրևոտ օրերին կամ էլ՝ երբ հարևաններից մարդ կա իր հետ, իսկ մնացած դեպքերում նա մինչև 9-րդ հարկ է գնում ու այնտեղից ոտքով է բարձրանում: Ինչո՞ւ: :ուն Լեյբոմ վմնոյվ ի ժոգոի ցվձվմս Դ յ ըոմի իսն -սցոդվցոցո ցոմոլո Լեյբոցո յ Լսմոմի միոցսի վիմոյ նմ-Ղ Դ յ յ իոոոպոցոմոի տոձ մնմոց նիլ

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՐԱԶԱՆԵՐԻՍ ԶԵՏՔԵՐՈՎ

Մարդն իր էությանը երազող է: Չկա երկրագնդի վրա այնպիսի մարդ, որ զուրկ լինի երազելու կարողությունից: Ինքս էլ, երբ փոքր էի, խճճվել էի իմ երազանքների բավիղներում, սակայն այդ երազանքների մեջ առանձնանում էր ոստիկան դառնալու բաղձալի ցանկությունս. կրել համազգեստ, որի վրա կշողջողան աստղերը:



Մասնագիտությունը ընտրելիս մարդիկ ուղղորդվում են տարբեր պահանջներով: Դա կարող է պայմանավորված լինել ինչպես անձի արժեհամակարգով, այնպես էլ՝ ընտանիքի գաղափարախոսության ազդեցությամբ: Օրինակ՝ եթե անձի համար կյանքում առավել կարևոր է նյութական ապահովվածությունը և դրանից բխող սոցիալական հանգստությունը, ապա նա կընտրի այնպիսի մասնագիտություն, որը տվյալ պահին արդիական է և պահանջված: Իսկ եթե անձի համար կարևոր է անձնային ինքնաբավությունը, ինքնարդևոտությունը, աշխատանքից հաճույք ստանալը և մարդկությանն օգտակար լինելը, ապա նա կընտրի այն մասնագիտական ոլորտը, որը կբավարարի նրա անձնային աճն ու ինքնառեալիզացումը: Շատ սուբյեկտիվ կլինի, եթե փորձենք առանձնացնել, թե որն է այս տարբերակներից ճիշտ կամ սխալ: Յուրաքանչյուր ունենք մեր ընտրության հնարավորությունը, որը կատարում ենք մեր ներքին բովանդակությանը համապատասխան: Դեռևս մոտ 2,5 հազարամյակ առաջ Պլատոնը նախանշել է այն, որ աշխատանքի և հասարակության զարգացման գործում անխուսափելի է անհատի գործունեության դերերի տարանջատումը, այսինքն՝ մասնագիտության ընտրությունը: Իմ թևավոր երազանքների իրագործման ճանապարհին մեծ դեր ունեցան բանակային ծառայության երկու տարիներս: Կարելի է անվերապահորեն հաստատել, որ դժվարություններով առջեցում այդ երկու տարիներն ինձ ավելի մոտեցրին իմ երազանքի իրագործմանը՝ դառնալ օրինապահ, ծառայել ժողովրդիս ու օրենքին: Իսկ իմ խորին համոզմամբ՝ ոստիկանությունը հենց այն ոլորտն է, որը հետագայում կխթանի իմ անձնային աճին ու ինքնառեալիզացմանը: Դրա համար էլ ես այստեղ եմ՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, որի համբավն ու հարգը տարեցտարի ծավալվում է թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս: Ինձ մնում է միայն օգտվել ընձեռված հնարավորությունից և որքան հնարավոր է լավ սովորել, օր օրի կայանալ և դառնալ հայրենիքիս արժանի օրինապահ: Ռոբերտ Գրիգորյան ակադեմիայի 1-ին կուրսի սովորող, ոստ սերժանտ

ԱՄԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

Ուժե՞ր եղի՞ր, ՍԱՐԴ Լինում են մարդիկ, որ իրենց կյանքում Ուժեղ են լինում, երբեք չեն տնքում: Լինում են մարդիկ, որ հաճախ կյանքում, Շատ թույլ են լինում, անվերջ բողբոջում: Բայց, ի՞նչ եք կարծում, արժե՞ բողբոջել, Արժե՞ ողջ կյանքում միայն մորմոքել, Արժե՞, որ կյանքում լինես միշտ դժբախտ, Ու կյանքդ դարձնես տանջող, ցավոտ ախտ: Մարդը իր կյանքում պիտ լինի ուժեղ, Երբեք չտոգա, հանց թշվառ մժեղ, Մարդը իր կյանքում պիտ լինի հպարտ, Եվ ամեն դեպքում միշտ մնա անպարտ, Դնի իր առջև հստակ նպատակ, Իսկ լուրջ հարցերում չամի նա կատակ, Հեռու միշտ մնա անդունդից անտակ, Թշամուն, չարին գցի ոտքի տակ: Եվ համոզված եմ՝ կգա ժամանակ, Մարդուն կտրվի գանձեր անհատակ: Պայքարող մարդը շատ հզոր ամ է, Պատվով ապրել էլ այս կյանքի գանձն է:



ԱՐՏԱՎ ՄՆԱՑՎԱՆՅԱՆ ոստիկանության մայր

ՈւՋՈՒՄ ԵՍ

Ուզում են այսօր մի ճրագ դառնալ Ու խավարի մեջ՝ հայացքիդ առաջ, Խի՞նդը աչքերիս, լուռ արձանանալ: Ուզում են այսօր մի կու՛մ ջուր դառնալ, Որ ընձայն դու ինձ ու կամաց-կամաց Լցվես ինձանով... Ուզում են մի պահ հուր-կրակ դառնալ, Օջախդ վառել, որ նստես կողքին Ու լուռ ջերմանաս,

Իսկ ես վայելեմ ներկայությունը: Բայց առավել շատ Ուզում են դառնալ մի վառ արեգակ, Որ ամեն անգամ Վերև նայելիս Ուղղակի ժպտաս...

Աստղիկ Տոնոյան ակադեմիայի 1-ին կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ